

ՀԱՅ-ՄՈՆԴՈԼԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ի. ԿԱԼՍՅԱՆ

Կիրիկյան հայկական թագավորության և մոնղոլական կայսրության միջև
աւելաված դիվանագիտական բանակցությունների նախնական շրջանը սերտ
կերպով կապված է Չմանկատուկի հռչակավոր ճակատամարտի հետ, որը տեղի
է ունեցել 1243 թվականին՝ մոնղոլ նվաճողների և Բկոնիայի սելջուկյան սուլ-
թանության զորքերի միջև:

Ինչպես հայտնի է, դեռ 1235 թվականին մոնղոլ խաների արքունիքում՝
Պարագորումում քննարկվեց մոնղոլական կայսրության համաշխարհային տի-
րապետություն ստեղծելու հարցը: Այս ուղղման իրականացման կապակցու-
թյամբ Չինգիզ-խանի թոռ Բաթու-խանի ղեկավարությամբ մի վիթխարի բա-
նակ ուղարկվեց Ռուսաստանը և Եվրոպայի հարավ-արևելյան երկրները նվա-
ճելու համար: Ահա հենց այս ժամանակաշրջանումն էր, որ մոնղոլական մի
ուրիշ զորաբանակ, հայտնի զորավար Չարմաղանի հրամանատարությամբ,
Պարսկաստանի վրայով շարժվեց Անդրկովկաս: Չարմաղանը կարճ ժամանա-
կամիջոցում նվաճեց և մոնղոլական կայսրությանը ենթարկեց Անդրկովկասի
երկրները՝ Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը: Չարմաղանի մոնղոլական
այս արշավանքը դեպի Անդրկովկաս առաջինը չէր: Դեռ 1220 թվականի դեկ-
տեմբերին Չինգիզ-խանի կողմից կազմակերպված քսանհազարանոց մի հե-
տախույզ բանակ, Ջեբե Նոյունի և Սուբադա-Բահաթուրի ղեկավարությամբ,
ներխուժել էր Անդրկովկաս: Չինգիզ-խանի այդ հետախույզ բանակը հունանի
դաշտում մարտի բռնկելով 60 հազարանոց հայ-վրացական միացյալ զորքերի
հետ, պարտության էջ մատնել նրանց և իր անելիքը Անդրկովկասում ավար-
տած համարելով և խուսափելով հետագա մարտերից, Շիրվանի նեղ կիրճե-
րով անցել էր Կովկասի գլխավոր լեռնաշղթան և ներխուժել Հյուսիսային Կով-
կաս, որտեղ 1223 թվականին Կալկայի հռչակավոր ճակատամարտում պար-
տության էր մատնել ռուսների և զփշաղների միացյալ բանակներին:

Դրանից հետո մոնղոլական նվաճողները Անդրկովկասում երկար ժամա-
նակ չէին երևում, չնայած հայ պատմիչներից ոմանք հիշատակում են Անդր-
կովկասում մոնղոլների մղած մասնակի պատերազմների մասին¹: Բայց մոն-
ղոլական այդ զորախմբերը նպատակ չունեին նվաճելու Անդրկովկասը. նրանք
երևացել էին Անդրկովկասում հետապնդելով հովարեզմի շահ Ջալալեդդինին,
որը խուսափելով մոնղոլների հետ ճակատամարտ տալ, թուրքական հրոսակ-
ներից կազմված մի վիթխարի բանակով ներխուժել էր Անդրկովկաս և այնտեղ
շուրջ յոթ տարի անընդհատ պատերազմներ էր մղում մերթ տեղի իշխանու-

¹ Այդ պատերազմների մասին Անդրկովկասում մինչև 1236 թվականը տե՛ս Հ ո վ ս ե ֆ յ ա ն
Բ., Յիշատակարանք ձեռագրուց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 962: Տե՛ս նաև Մատենադարանի
ձեռ. № 1973, էջ 195ա—198բ:

թյունների, մերթ նրան հետապնդող մոնղոլական զորամասերի դեմ: Չարմաղանի արշավանքը բոլորովին այլ նպատակ էր հետապնդում: Մոնղոլական ղուրուլթայի որոշմամբ նա դալիս էր նվաճելու ամբողջ Անդրկովկասը: Հենց այդ Չարմաղանն էր, որ հարյուր հազարանոց մոնղոլական զորքի գլուխ անցած, փոթորկող մորիկի նման շարժվեց Անդրկովկասի վրա և կարճ ժամանակամիջոցում նվաճեց Հայաստանը, Աղվանքը և Վրաստանը: Մոնղոլներն այս անգամ շարժվում էին իրենց ընտանիքներով և ամբողջ ունեցվածքով՝ «ամենայն աղիւիք բազմութեամբ իւրեանց», վկայում է Կիրակոս Գանձակեցին²: Այդ ժամանակ, ինչպես հայտնի է, վրաց թագավորական դահին նստել էր Ռուսուղան թաղուհին, որի տիրապետության շրջանում կենտրոնական թագավորական իշխանությունը չափազանց նսեմացել էր:

Բացի այն ավերիչ պատերազմները, որ մղվում էր սուլթան Ջալալդդինի զորքերի դեմ, երկրում ուժեղացել էին նաև երկպառակությունները և անկարգությունները: Դրանով է մասամբ բացատրվում այն հանգամանքը, որ երբ մոնղոլական նվաճողները ներխուժեցին Անդրկովկաս, նրանց դեմ ոչ ոք լուրջ դիմադրություն չկազմակերպեց: Այդ պատճառով էլ մոնղոլական հորդաները առանց դժվարության, կարճ ժամանակամիջոցում տիրացան Անդրկովկասյան երկրներին: Չարմաղանը Անդրկովկասը հեշտությամբ նվաճելու համար, ամբողջ երկիրը բաժանեց իր զորապետների միջև: Մոնղոլական նվաճողները կարճ ժամանակամիջոցում՝ ավերումների, սրի ու հրի միջոցով նվաճեցին ու իրենց ենթարկեցին Անդրկովկասի երկրները՝ Վրաստանը, Հայաստանը և Աղվանքը: Մեծ Հայքից բազմաթիվ ընտանիքներ փախան Կիլիկյան Հայաստան իրենց հետ տանելով բարբարոս մոնղոլների սարսափների ու դաժանությունների հրեշավոր սպալորտությունները:

Մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Չարմաղանը Անդրկովկասի ճակատամարտերում համրանալու պատճառով հանվեց պաշտոնից³:

Մոնղոլական զորքերի նոր հրամանատար նշանակվեց Բաչու Նոյոնը⁴, որը ստանձնելով Անդրկովկասում մոնղոլական զորքերի ղեկավարությունը, մեծ բանակով շարժվեց դեպի Բկոնիայի սելջուկյան պետությունը: Առաջին զոհը եղավ Կարին (էրզրում) քաղաքը, որը մոնղոլները շրջապատեցին 1242 թ. աշնանը: Գրիգոր Քկենբրցու վկայությամբ մոնղոլները Կարին քաղաքը զրավեցին երկու ամիս պաշարելուց հետո⁵: Մինչև քաղաքի զրավումը մոնղոլները պատգամավորություն ուղարկեցին և պահանջեցին անձնատուր լինել, բայց քաղաքի պաշտպանները ոչ միայն չհամաձայնվեցին, այլ անարգեցին և

² Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Կ. Մելիք-Յանջանյանի, 1961, էջ 235:

³ Վ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն, Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դարերի, հատ. II, Երևան, 1956, էջ 346:

⁴ Ս ի ք ա ն ի պատմիչների վկայությամբ մոնղոլները նոր հրամանատար նշանակելու համար վիճակ էին գցում: Կիրակոս Գանձակեցին պատմում է. «Փոխանակ Չարմաղունին, որ համրացել էր, գոմն մի ի ղորացն՝ Բաչու-ղուրչի անուն. նմա անկեալ վիճակն առաջնորդութեան» (Կ ի ր ա կ ո ս, էջ 279):

⁵ Գ Ր Ի Գ Ո Ր Ա կ ն ե ց ի, Պատմութիւն վասն աղգին նետողաց, երբեմն համարեալ Մաղաթիա Արեղայի, Կեմրիք, 1954, էջ 306: Կիրակոս Գանձակեցին նույնպես նշում է, որ պաշարեցին, բայց ժամանակը ցույց չի տալիս. նա գրում է. մոնղոլները մտան «Կարին գաւառ» պաշարեաց զթէողուպօլիս, որը այժմ կոչի Կարնոյ քաղաք» (Կ ի ր ա կ ո ս, էջ 279):

քաղաքից դուրս վոնդեցին Բաշու նոյոնի պատգամավորներին: Գազազած մոնղոլները հարձակվեցին քաղաքի վրա և գրավեցին այն, կողոպուտի և ավարի ինթարկեցին, իսկ ազգարնակությանը սրի մատնեցին: Բացի այդ քաղաքից, նրանք ավերեցին, պատմիչի խոսքերով՝ «զրազում գաւառս յիշխանութենէ սուլտանին հոռոմոց»⁶:

Կարին քաղաքը գրավելուց և կողոպտելուց հետո մոնղոլները այլևս չշարունակեցին իրենց արշավանքը դեպի երկրի խորքը: Քանի որ մոտենում էր ձմեռը, նրանք նորից ետ դարձան Մուզանի տաք և հարմար հովիտը, ձմեռն այնտեղ անցկացնելու համար, որտեղ պատմիչի վկայությամբ՝ «ի կայս ձմերոցի իւրոյ, յարգաւանդ և ի բերրի դաշտն, որ կոչի Մուզան, և անդ ձմեռեաց»⁷:

Իկոնիայի սուլթան Ղիաթեդդին Քե, խոսքով Բ-ն (1237—1247), ճաշակելով մոնղոլ նվաճողների դառնությունը, սկսեց ուժեղ նախապատրաստություններ տեսնել: Նա ոչ միայն բազմապատկեց իր զորքերի թիվը, այլ դրանց հետ միասին հավաքագրեց հարևան պետություններից վարձկան զորքեր: Նրա բանակում, պատմիչների վկայությամբ, կային մեծ քանակությամբ հունական, եգիպտական և «ֆրանկական» զորագնդեր: Իկոնիայի սուլթանը հրավիրեց անգամ իրեն թշնամի խաչակիր ասպետներից կազմված հեծյալ գնդեր, որոնց խոստացավ, ինչպես վկայում է Հեթում Պատմիչը, «պարզես, և այսպէս հաւաքեալ զմեծ բազմութիւն մարդկաց»՝ խաղաց ի տեղին, ուր դեգերէին թաթարք⁸: Նույն պատմիչի հաղորդմամբ, սուլթանի կողմից հրավիրված միայն լատինացիների թիվը հասնում էր 2000 հեծյալի⁹: Հեթում Պատմիչի այս վկայությունը հաստատում է Աբուլ Ֆարաջը, որը գրում է, թե սուլթան Ղիաթեդդինը «հավաքեց բազմաթիվ զորքեր և ոսկով (վարձեց) Հալեպի ձիավորներ, ֆրանկներ և Մատայի և հույներ: Էմեսսիայի տերը և Մելիթ Ղազին, Մայֆարգի-նի տերը, խոստացան, որ իրենք ալ (օգնության) պիտի գան»¹⁰: Սուլթանը, ինչպես գրում է Աբուլ Ֆարաջը, օգնության է դիմում նաև Կիլիկյան հայոց թագավորությանը: Նա գրում է. Կոստանդին Պալլը «Սուլթանին եկավ ի Կեսարիա և մեծ պատիվներով ընդունեցավ և շատ նվերներ ստացավ և ան խոստացավ երթալ ու մի ժողովել բազմաթիվ հայեր և սուլթանին օգնության գալ»¹¹:

Այսպիսով, Ռումի սուլթանը վիթխարի բանակով շարժվեց դեպի մոնղոլները: Նա հատուկ պատգամավոր ուղարկեց Բաշու նոյոնի մոտ և պահանջեց, որ նա հեռանա Իկոնիայի թագավորության սահմաններից, սպառնալով նրան իր հզորությամբ, ասելով Կիրակոս Գանձակեցու խոսքերով՝ «Քաղաքք իմ անթիւք են ի բազմութենէ, և զօրաց իմոց չիք համար»¹²: Այնուհետև նույն պատմիչը հաղորդում է, որ սուլթանը շատ ամբարտաւան խոսքեր ասաց, «այլ բազում բանիւք որ նման է սոցին, մեծամեծս փրայր», բայց մոնղոլների զորքերի գլխավոր հրամանատար Բաշու նոյոնը, որը Գրիգոր Ակներցու վկայու-

⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 280:

⁷ Նույն տեղում:

⁸ Հեթում Պատմիչ Բաթարաց, Վենետիկ, 1842, էջ 38:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Հ. Քյուրտյան, Երիզա և Նկեդեաց գաւառ, պատմական համագրութիւն, հատ. Ա, Վենետիկ, 1953, էջ 107:

¹¹ Նույն տեղում:

¹² Կիրակոս Գանձակեցի, էջ 281:

Մյամր «յաջողեալ էր ի դործ պատերազմի»¹³, արհամարհեց սուլթանին ասելով. «Ում աստուած տացէ, նորա լիցի յաղթութիւն»¹⁴:

Ժամանակակից պատմիչները սուլթանի զորքերի բանակի վերաբերյալ տարրեր թվեր են ցույց տալիս: Այսպես, վրաց տարեգիրք այն հասցնում է 400000-ի¹⁵, որ իհարկե չափազանցություն է, իսկ սելջուկների ջատագով Իբն Բիբին այդ թիվը իջեցնում է մինչև 70 հազարի¹⁶, որը նույնպես հավանական չէ: Վիլհելմ դր Ռուբրուկը այդ թիվը հասցնում է 200 հազարի¹⁷: Կիրակոս Գանձակեցին որոշակի թիվ ցույց չի տալիս, նա միայն նշում է, որ սուլթանը զուրս բերեց զորք «անթիւ բազմութեամբ»¹⁸: Այսպես է վարվում նաև Հեթում Պատմիչը, որը գրում է, թե սուլթանը զուրս բերեց այնքան զորք, «որչափ կարող եղև»¹⁹:

Գրիգոր Ակներցին սուլթանի զուրս բերած զորքերի բանակը համարում է 160 հազար, որը ավելի հավանական է²⁰:

Ժամանակակից պատմիչները չափազանց տարբեր են ցույց տալիս նաև մոնղոլների զորքերի թիվը: Վիլհելմ դր Ռուբրուկը ցույց է տալիս 10 հազար զինվոր²¹, իսկ Հեթում Պատմիչը՝ 30 հազար²²:

Ոմանք այդ թիվը որոշակի ցույց չեն տալիս, այլ ուղղակի նշում են, որ մոնղոլական զորքերի բանակը երեք անգամ պակաս էր սուլթանի զորքերի թվից²³:

Մեր կարծիքով սուլթանի զուրս բերած զորքերի թիվը կարելի է հաշվել 160—180 հազար, իսկ մոնղոլների զորքերի բանակը ոչ ավելի 65—70 հազարից:

Չմանկատուկի ճակատամարտի նախօրյակին Իկոնիայի սուլթան Ղիաթեդդին Քեյ Խոսրով Բ-ը մի խոշոր զորաբանակ իր ավագ որդի Շալվեի գլխավորությամբ ուղարկեց մոնղոլների դեմ՝ նրանց առաջխաղացումը կանխելու համար: Վճռական ճակատամարտը մոնղոլ նվաճողների և Իկոնիայի սուլթանի զորքերի միջև տեղի ունեցավ, Գրիգոր Ակներցու վկայությամբ, «ի մէջ դաշտավայր տեղացն, որ կայ ընդ մէջ Կարնոյ քաղաքի և Երզնկայի»²⁴, Օվայի դաշտում²⁵: Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ, որը այժմյան Չիմին գյուղն է²⁶:

¹³ Գրիգոր Ակներցի, էջ 308:

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 281:

¹⁵ Гордлевский В. А., Государство Сельджукидов Малой Азии, М., Л., 1941, էջ 36:

¹⁶ Гордлевский В. А., Избранные сочинения, том I. Исторические работы, М., 1960, էջ 63:

¹⁷ Вильгельм де Рубрук, Путешествие в Восточные страны, введ., перевод и примечания А. Малеина, СПб., 1911, էջ 175:

¹⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 282:

¹⁹ Հեթում Պատմիչ, էջ 38:

²⁰ Գրիգոր Ակներցի, էջ 308:

²¹ Гордлевский В. А., Избранные сочинения, том I, էջ 63:

²² Հեթում Պատմիչ, էջ 38:

²³ Հ. Աստուրյան, Պատմութիւն Հայոց, Թուենոս Այրես, 1917, էջ 176:

²⁴ Գր. Ակներցի, էջ 308:

²⁵ Արշ. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ Կեոարիոյ, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 515:

²⁶ Չմանկատուկ գյուղաքաղաքի անունը հիշատակում է միայն Կիրակոսը, էջ 282:

Ռաշիդ-էդ-դին²⁷ և Իրն-Բիրին²⁸ մոնղոլական նվաճողների և Իկոնիայի սուլթանի զորքերի հանդիպման վայրը անվանում են Քյոսե-դադ, այսինքն լիրկ լեռ, որը մեր կարծիքով պետք է լինի նույն Չմանկատուկի շրջանի լեռները²⁹:

Իկոնիայի սուլթանի զորքերի և մոնղոլական նվաճողների միջև տեղի ունեցող պատերազմի վերաբերյալ խոսում են հայ պատմիչներից Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակներցին, Վարդան Արևելյցին և մասամբ Հեթում Պատմիչը: Խոսելով Չմանկատուկի ճակատամարտի մասին, Գրիգոր Ակներցին պատմում է, որ Իկոնիայի սուլթանի ավագ որդի Շալվեն, որը պատերազմական զործողություններն սկսել էր մոնղոլների զորքերի ձախ թևից, փայլուն հաղթանակ է տանում. «զարծոյց զՏաթարն և բազումս կոտորեաց ի նոցանէ»³⁰. այսինքն՝ Շալվեի զորքը կոտորում է մոնղոլներին և նրանցից շատերին սրի անցկացնում: Բայց հայ-վրացական զորքերը, որոնք կռվում էին մոնղոլների զորքերի աջաթևյան ճակատում, ջարդում են սուլթանի զորքերին և նրանց փախուստի մատնում: Ակներցին գրում է. «Ազատագունդ զօրօքն հայոց և վրաց, որք ընդ նմա դարձուցեալ զաջ թև զօրաց սուլթանին բազում ամիրայից և մեծամեծաց զլուխս հատեալ»³¹:

4. Գանձակեցին մոնղոլների հաջողությունը բացատրում է Բաշու նոյոնի «խորագէտ իմաստութեամբ»³², որը հայ-վրացական զորախմբերին, որպեսզի չզավաճանեն իրեն, դուրս էր բերել ռազմաճակատի առաջին գոտին. («զր մի նենդ ինչ զործեսցեն»), իսկ իրենք՝ մոնղոլները նետ ու աղեղով, ինչպես նաև ռազմական այլ զենքերով հեռվից հարվածելով պարտության են մատնում սուլթանի զորքերին, և «մարտուցեալք ի փախուստ դարձուցին զնա»³³, գրում է Կիրակոսը:

Չմանկատուկի ճակատամարտում սուլթան Ղիաթեդդինի զորքերի կրած պարտության մասին հիշատակում է նաև Հեթում Պատմիչը, որը նշում է՝ «թուրքք տիրապէս մատնեցան ի պարտութիւնս»³⁴: Մոնղոլական նվաճողների հաջողությունը Չմանկատուկի ճակատամարտում բացատրվում է նրանով, որ նրանք օգտագործում էին ռազմական բարձր տեխնիկա, որից չունեին սելջուկները: Մոնղոլները զործադրում էին բաբաններ, փխիկուաններ և զանազան քարեր նետող ու պարիսպներ քանդող մեքենաներ:

Մոնղոլ նվաճողների հաջողության պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք օգտագործում էին իրենց շարքերում գտնվող օտար զորախմբերին.

27 Հ. Վ. Ն. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932, էջ 28:

28 Гордлевский, ИЗБ. соч., էջ 63:

29 Հ. Մանանդյանը գտնում է, որ երկու կողմերի միջև «ընդհարումը տեղի ունեցավ Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ, որը համապատասխան կարող էր լինել Երզնկայից մոտ 15—20 կիլոմետր արևելք գտնվող այժմյան Չիմին գյուղին» (տե՛ս Հ. Մանանդյան, Փնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 215): Չմանկատուկի տեղը պարզելու և այդ տեղիները բացատրելու վերաբերյալ հանգամանորեն խոսում է Հարություն Քյուրտյանը, տե՛ս «Երիզա և Եկեղեաց գաւառ» էջ 109, տե՛ս նաև Brosset, Deux historiens Armeniens, Kiracos de Gantzac..., t. I, Petersbourg, 1870, էջ 110, ծանոթ. 1:

30 Գրիգոր Ակներցի, էջ 308:

31 նույն տեղում:

32 Կիրակոս Գանձակեցի, էջ 282:

33 նույն տեղում:

34 Հեթում Պատմիչ, էջ 39:

առաջ էին քշում նրանց: Այդ մասին հետաքրքրական տեղեկություններ է տալիս Պլանո Կարպինին: Նա գրում է, որ մոնղոլները իրենց գերիներին ուղարկում էին ճակատամարտի առաջին գոտին և ստիպում էին, որ նրանք անպայման հաղթություն տանեն: Եթե նրանք վատ կռվեին, նրանց մահվան դատավճիռ էր սպասվում, իսկ հաղթանակ տանելու գեպքում՝ նրանցից շատերին բարձրացնում էին անդամ հրամանատարի աստիճանի³⁵: Ահա այսպես էին վարվում մոնղոլները իրենց շարքերում գտնվող հայ-վրացական զորախմբերի հետ, որոնք կռվում էին առաջին շարքերում, իսկ եթե նրանք փորձեին նահանջել, ապա բոլորին մոնղոլները կոչնչացնեին: Մոնղոլների դաժանությունների մասին պատմում են հայ պատմիչները: Խոսելով Չմանկատուկի ճակատամարտում մոնղոլների դաժանությունների մասին, Վարդան Արևելցին գրում է. «Այն գործեցան արդիւնքն արժանաւոր ողբաց և արտասուաց, ոչ միայն բանականաց, այլ անբանից, լերանց և դաշտաց, որք ոռոգեցան արեամբ և արտասուօք»³⁶:

Չմանկատուկի ճակատամարտում մոնղոլների դաժանությունների մասին խոսում են նաև բազմաթիվ այլ փաստաթղթեր՝ ու հիշատակարաններ³⁸:

Ամփոփելով Չմանկատուկի ճակատամարտի վերջնական արդյունքները, պետք է նկատել, որ Իկոնիայի սուլթան Ղիաթեդդինը վերջնականապես պարտության չմատնվեց: Ծիշտ է, նրա զորքերի մի մասը ջախջախվեց, բայց սուլթանը իր հավատարիմ զորքերով քաշվեց երկրի խորքը, հետադաշտում մոնղոլներին դիմադրություն կազմակերպելու նպատակով: Սուլթանի այդ վերաբերմունքը պատմիչները բացատրում են նրանով, որ նա կասկածում էր իր զորապետների հավատարմության վրա, այդ պատճառով էլ նա թողեց պատերազմի դաշտը. պատմիչի վկայությամբ՝ սուլթանը «մազապուր թողեալ զկահ և զկարասի անդէն ի տեղւոջն»³⁹, հեռացել էր պատերազմի դաշտից:

Դր. Ակներցին սուլթանի փախուստը բացատրում է. «յերկմտութենէ ամիրայիցն, որ կամէին հնազանդել Տաթարին»⁴⁰:

Այդ փախուստը այնքան անակնկալ է եղել, որ անգամ մոնղոլների հրամանատար Բաչու Նոյոնը կասկածել է և հրամայել է ստուգել պատմիչի խոսքերով. «Կացուցին սակաւ մի ի զօրացն պահապանս, զգուշութեամբ ի վերայ վրանիցն, ասելով թէ խաբելաւորիւն ինչ է»⁴¹, — գրում է պատմիչը:

Երբ Բաչու Նոյոնի հետախույզները պարզեցին, որ իրոք սուլթանը փախել է, այն ժամանակ մոնղոլներն սկսեցին ազատորեն թալանի ենթարկել սուլթանի դյուղերն ու քաղաքները. սկսեցին «բանդել զբազում դաւառս, և ժողովել ոսկի և արծաթ, և հանդերձս մեծագինս, և ուղտս, և ձիս, և ջորիս, և անթիւ անասունս»⁴²: Այսպիսով, 1243 թվականի Չմանկատուկի ճակատա-

³⁵ Джиганни Дель Пано Карпини, История монголов. редакция, вступительная статья и примечания Н. П. Шестинной, М., 1957, т. 2, 60.

³⁶ Վարդան, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 148:

³⁷ Армянские источники о монголах, извлечения из рукописей XIII—XVI вв., перевод с древнеармянского, предисл. и примеч. А. Г. Галстяна, М., 1962, т. 2, 36.

³⁸ Մատենադարան, ձեռ. № 1973, էջ 195—199:

³⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 283:

⁴⁰ Գրիգոր Ակներցի, էջ 310:

⁴¹ Նոյն տեղում:

⁴² Կիրակոս Գանձակեցի, էջ 283:

մարտը Վճռական նշանակություն ունեցավ թուրք-սելջուկների պետականության գոյության պահպանության համար Փոքր Ասիայում: Սուլթան Ղիաթեդ-գին Քեյ խոսքով Բ-ի դեմ մոնղոլ նվաճողների տարած հաղթանակը վերջնականապես կործանեց Իկոնիայի սելջուկյան թագավորությունը և հարկատու դարձրեց մոնղոլական կայսրությանը:

Չմանկատուկի ճակատամարտի ելքից էր կախված Կիլիկյան հայոց թագավորության բախտը: Ամբողջ կովի ընթացքում Հեթումյանները ուշի ուշով հետևում էին պատերազմի ընթացքին: Նրանց հետաքրքրում էր, թե ինչով կվերջանա Չմանկատուկի այդ ճակատամարտը, որպեսզի իրենք կարողանային կողմնորոշվել կա՛մ դեպի Բկոնիայի թագավորությունը, կա՛մ դեպի մոնղոլները: Այժմ, երբ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը իր վիթխարի բանակով պարտվել էր, Կիլիկյան հայոց թագավորությունը, որը մշտական սպառնալիքի մեջ էր նախ և առաջ իր հարևան, դեպի ինքը թշնամաբար տրամադրված մահմեդական պետությունների կողմից, այլ կերպ չէր կարող վարվել, եթե ոչ իր բախտը փորձել՝ մոնղոլ նվաճողների հետ լեզու գտնելու մեջ: Կիլիկյան լայն քաղաքական գործիչները այդպես էլ վարվեցին, երբ Հեթումյաններին պարզ եղավ Չմանկատուկի ճակատամարտի ելքը, նրանք առանց ժամանակ կորցնելու շտապեցին բանակցություններ վարել մոնղոլների զորքերի հրամանատարության հետ և նրանց հայտնել իրենց հնազանդությունը: Հեթումյանների արտաքին քաղաքականության այդ քայլը բխում էր երկրի և ժողովրդի շահերից: Հաղթական մոնղոլական բազմամարդ բանակը արդեն մոտեցել էր Կիլիկյան հայոց թագավորության սահմաններին: Պրոֆ. Գ. Միքայելյանի պատկերավոր արտահայտությամբ՝ այժմ արդեն ոչ թե «կայծերը», այլ «հրդեհի բոցն էր մոտենում Կիլիկյան Հայաստանի սահմաններին»⁴³:

Մեծ Հայաստանից Կիլիկիա փախած և այնտեղ ապաստարան գտած բազմահազար հայեր, որոնք ազատվել էին մոնղոլ բարբարոսների սրից, հանգամանորեն պատմել էին մոնղոլների դազանությունների և սոսկալի դաժանություններին, նրանց գործած անիրավությունների ու սարսափների մասին: Այժմ, երբ մոնղոլ նվաճողների դաժանությունների լուրը տարածվել էր մինչև Կիլիկյան հայոց թագավորությունը, առավել ևս, երբ Բկոնիայի հզոր թագավորությունը պարտություն էր կրել մոնղոլներից, Հեթումյանները հաշվի առնելով նոր ստեղծված քաղաքական հանգամանքները, որոշեցին անմիջապես պատվիրակություն ուղարկել մոնղոլների մոտ և նրանց հետ բանակցություններ սկսել: Հեթումյանները մոնղոլներին իրենց հնազանդությունը հայտնելով հաշվի էին առնում միաժամանակ այն հանգամանքը, որ վաղ թե ուշ հզորացող Իկոնիայի և Եգիպտոսի սուլթանությունները վերջացնելով իրենց պատերազմները խաչակիրների ստեղծած կոմսությունների հետ Մերձավոր Արևելքում, հարձակվելու էին նաև Կիլիկյան հայոց թագավորության վրա, որը մի փոքրիկ քրիստոնյա թագավորություն էր, շրջապատված մահմեդական թշնամի պետություններով: Եվ եթե մինչև այդ չէին կարողացել Կիլիկյան թագավորությունը տապալել, ապա այդ բացատրվում է այն զգույշ և ճկուն քաղաքականությամբ, որ վարում էին Հեթումյանները իրենց հարևան մահմեդական պետությունների հետ: Հեթումյանները աշխատում էին բարի դրացիական հա-

⁴³ См. Микаелян Г. Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952, т. 2, с. 297.

բարեբախտություններ ստեղծել սուլթան Ալադինի հետ: Նրա մահից հետո Հեթում-
յանները աշխատեցին լեզու գտնել նրա որդու՝ սուլթան Ղիաթեղդին Քեյ խոս-
րով Բ-ի հետ (1237—1247): Կիլիկյան հայոց թագավորությունը այս սուլ-
թանի հետ ևս կարողացավ դաշն կնքել և բարի դրացիական հարաբերությու-
ններ պահպանել: Կոստանդին Պալլը, վկայում է Կիրակոս Գանձակեցին, «Արար
սէր և միաբանութիւն և ընդ սուլտանին հռոմոց»⁴⁴: Միաբանությունը շեշ-
տելով, հայ պատմիչները Հեթումյանների արտաքին քաղաքականությունը
բնութագրում էին որպես խաղաղասիրական հանդեպ իր հարևան պետությու-
նների՝ Կոստանդին Պալլը «այսպէս առնէր ընդ ամենայն շրջակայ աղղսն, և
յամենայն կողմանց խաղաղացոյց զաշխարհս»⁴⁵, եզրակացնում է պատմիչը:
Հեթումյանների խաղաղասիրական քաղաքականությունից է բխում հենց այն
փաստը, որ Կիլիկյան հայոց Հեթում Ա թագավորը իր Սիս մայրաքաղաքում
հատել է տալիս երկլեզվյան դրամներ Հեթում Ա թագավորի և Իկոնիայի
սելջուկ սուլթան Ղիաթեղդին Քեյ խոսրովի անուններով, ի նշան հայ-սելջուկ-
յան բարեկամության: Այժմ, երբ մոնղոլների սպառնալիքը առկա էր, Իկո-
նիայի սուլթանը, հաշվի առնելով իր բարեկամությունը Հեթումյանների հետ,
դիմում էր Կոստանդին Պալլին և խնդրում նրանից ռազմական օգնություն:
Հեթումյանները իհարկե սուլթանին օգնություն ցույց չտվեցին. նրանք լավ
գիտեին, որ Իկոնիայի սուլթանությունը երկար ժամանակ չի պահպանի հա-
յերի հետ բարեկամությունը, քանի որ շատ հայ ֆեոդալներ միանալով խա-
չակիրների հետ, կռվում էին մահմեդական պետությունների դեմ: Այս բոլոր
հանգամանքները հաշվի առնելով Հեթումյանները ոչ միայն չօգնեցին սուլ-
թանին, այլ պատգամավորություն ուղարկեցին մոնղոլական զորքերի հրամա-
նատարությանը՝ իրենց հնազանդությունը հայտնելու համար:

Կիլիկյան հայոց պատվիրակությունը գլխավորում էր ինքը Կոստանդին
Պալլը, որին ուղեկցում էին Կիլիկյան հայոց զորքերի գլխավոր հրամանատար
Սմբատ Սպարապետը և վարդապետ Սիմոն Ասորին: Կիրակոս Գանձակեցին
այդ մասին գրում է. Կիլիկյան հայոց թագավորությունը «յորժամ ետես, եթէ
պարտեցաւ սուլտանն առաջին նոցա, առաքեաց առ նոսա դեսպանս և պա-
տարադս արժանաւորս՝ ղնել նոցա ընդ նմա ուխտ խաղաղութեան և նմա կալ
նոցա ի հնազանդութեան»⁴⁶: Կիրակոս Գանձակեցու այս վկայությունը հաս-
տատում է Հեթում Պատմիչը. «Արքայն Հայոց տէր Հեթում իբրև ես, ես, զի
թաթարք տիրապէս ընդ լծով արկին զամենայն թագաւորութիւն, զգաւառս և
զտեղիս մինչև ի թագաւորութիւն երկրին Թուրքաց, խորհուրդ արարեալ ընդ
իմաստունս՝ խորհեցաւ անձամբ երթալ առ ինքնակալն Թաթարաց, զի առաւել
դիւրաւ գտցէ զշնորհ և սէր նորա, մարթասցի կռել զդաշն խաղաղութեան ընդ
նմա»⁴⁷:

Հարց է ծագում, թե ինչպե՞ս եղավ, որ Կիլիկյան հայոց թագավորու-
թյան պատվիրակությունը այսպես հեշտությամբ ընդունվեց մոնղոլների կող-
մից և նրանց հետ բանակցություններ վարեց: Այս հանգամանքը բացատրե-
վում է նրանով, որ մոնղոլները ունեին զարգացած հետախուզական ծառայու-

44 Կիրակոս Գանձակեցի, էջ 190.

45 Նույն տեղում.

46 Կիրակոս Գանձակեցի, էջ 285.

47 Հեթում Պատմիչ, էջ 42.

թյուն, որոնց օգնությամբ նախքան պատերազմական զործողություններն սկսելը այս կամ այն երկրի հետ, նրանք պարզում էին տվյալ երկրի ներքին վիճակը, նրա վտխահարությունները հարևան պետությունների հետ, առանձին ֆեոդալների ներքին հակասությունները և հակամարտությունները։ Այս բոլորից հետո էր միայն, որ մոնղոլները բանակցություններ էին վարում այս կամ այն երկրի ներկայացուցիչների հետ։ Նրանք այսպես վարվեցին Կիլիկյան հայոց թագավորության ներկայացուցիչների հետ։ Մոնղոլները շատ լավ գիտեին, որ Կիլիկյան Հայաստանը ոչ շատ մեծ քրիստոնյա պետություն էր, շրջապատված մահմեդական թշնամաբար տրամադրված սուլթանություններով։ Բացի այդ, մոնղոլները կովի ընթացքում համոզվեցին, որ դեռ չեն տապալել Իկոնիայի հզոր թագավորությունը, իսկ իրենք շատ էին կտրվել թիկունքից և կարիք էին զգում իրենց նվաճած երկրների սահմանազլխում ունենալ մի հավատարիմ դաշնակից պետություն՝ իրենց աշխարհակալության սահմանները ապահովելու համար։ Այս բոլորը հայ-մոնղոլական բանակցությունների պատմա-քաղաքական նախադրյալներն էին և հաջողությունների գրավականը։

Բացի այդ, հայ-մոնղոլական բանակցությունների հաջող ելքի համար նշանակալից դեր կատարեցին նաև այն հայ իշխանները, որոնք Մեծ Հայաստանում արդեն հանձնվել էին մոնղոլներին և մասնակցում էին նրանց արշավանքներին։ Այդ իշխաններից կարելի է թվել Դոփի որդի Գրիգորին, Իվանեի որդի Ավագին, Զաքարի որդի Շահնշահին և ուրիշներին։ Հայերից շատերին մոնղոլները օգտագործում էին նաև իբրև զինվանագետներ։ Այդ տեսակետից աչքի էին ընկնում հայ զորավար Պոռշը, Վահրամ Գազեցին և ուրիշներ։ Մոնղոլների Կեսարիան գրավելու նախօրյակին, Ղիաթեղդինի հետ բանակցություններ վարելու նպատակով Բաշու նոյոնը ուղարկեց Վահրամ Գազեցուն։ Այդ մասին Գրիգոր Ակներցին գրում է. «առաքեցին զիմաստուն իշխանն Վահրամ, զտէրն Գազայ հրամանաւ Բաշոյն նուինին ևւ այն ամենայն զլխաւորաց Թաթարին ևւ ետուն զկնի Վահրամայ Թաթար զլխաւոր մի այլ հարիւր ձիաւորով և յուղարկեցին զնոսա մեծ սիսսաթով ի Կեսարիայ»⁴⁸։

Պատմիչների վկայությամբ շատ հայ իշխաններ Մեծ Հայաստանից մասնակցում էին մոնղոլական արշավանքներին իրենց սեփական զորագնդերով։ Նրանցից մեկն էր Խաչենի իշխան Հասան Ջալալը, որ մոնղոլների բանակ էր բերել, պատմիչի խոսքերով, «զօրք իւր և ազգականքն»⁴⁹։ Հենց այս Խաչենի իշխանաց իշխան Հասան Ջալալն էր, որ զործոն մասնակցություն ունեցավ հայ-մոնղոլական բանակցություններին։ Նա էր, որ Կիլիկյան հայոց թագավորական առաջին պատվիրակությանը ներկայացրեց մոնղոլների զորքերի զլխավոր հրամանատար Բաշու նոյոնին։ Կ. Գանձակեցու վկայությամբ, հայոց պատվիրակությունն «Յանդիման ևղեն Բաշու նուինին և Նլթինայ Խաթունին, կնոջն Չարմաղունին և այլ մեծամեծ աւագանւոյն՝ միջնորդութեամբ իշխանին Ջալալին»⁵⁰։

Կեսարիայում 1243 թ. հայ-մոնղոլական բանակցությունների հետևանքով կնքվեց համաձայնագիր, ըստ որի Կիլիկյան հայոց թագավորությունը

48 Գրիգոր Ակներցի, էջ 316։

49 Կիրակոս Գանձակեցի, էջ 284։

50 Նույն տեղում, էջ 285։

ճանաչում էր իր կախվածությունը մոնղոլական կայսրությունից, միաժամանակ պարտավորվում էր հարկ հղած ղեկավարում մատակարարել մոնղոլական զորքերին պարենամթերք, իսկ անհրաժեշտության դեպքում հայկական օժանդակ զորքեր տրամադրել նրանց: Կիլիկյան հայոց թագավորությունը պարտավորվում էր միաժամանակ հատուկ պատվիրակություն ուղարկել մոնղոլների արքունիքը՝ Ղարադորում, մեծ խանի մոտ՝ վերոհիշյալ պաշտանագիրը վավերացնելու համար: Մոնղոլական զորքերի հրամանատարությունը իր հերթին պարտավորվեց պահպանել Կիլիկյան հայոց թագավորության գերիշխանությունը և անկախությունը: Նրանք միաժամանակ պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկյան հայոց թագավորությանը այն դեպքում, եթե նա հարձակման ենթարկվի իր հարևան մահմեդական պետությունների կողմից:

Հայ-մոնղոլական դաշնագրությամբ շահագրգռված էին ոչ միայն Կիլիկյան հայ ֆեոդալները, որոնք շրջապատված լինելով մահմեդական հզոր պետություններով, սպառնալիքի տակ էին գտնվում, այլ նաև մոնղոլները, որոնք այդ դաշնագրությամբ ամրապնդում էին իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում: Այդ տեսակետից իրավացի է պրոֆ. Գ. Միրալյանը, երբ գտնում է, որ Կիլիկյան հայոց թագավորության հետ կնքած դաշնագրությունը ձևովում էր նախ մոնղոլների համար այն պատճառով, որ Կիլիկիան լուրջ պատվար կհանդիսանար մոնղոլներին՝ պաշտպանելով նրանց փոքրասիական մամուրների հարձակումներից⁵¹: Բացի այդ, նրանք ամրանալով Կիլիկիայի թագավորության սահմաններում, կարող էին հետագայում այն հենարան դարձնել թե Սիրիան և թե Կիլիկիային սահմանակից այլ երկրները նվաճելու համար: Ահա թե ինչպիսի քաղաքական հանգամանքներից էլնելով մոնղոլական նվաճողները համաձայնվեցին դաշն կնքել Կիլիկյան հայոց թագավորության հետ: Մոնղոլները, վկայում է Կիրակոսը, «Հաստատեցին և սէր ընդ արքայի [Հայոց] ետուն և դիր ըստ ղենին իւրեանց, զոր էլ-տամղայն»⁵² կոչվին»⁵³:

Հայ-մոնղոլական բանակցություններից անմիջապես հետո Բաշու նոյոնը պատվիրակություն ուղարկեց հայոց թագավորին և պահանջեց, որ սուլթան Ղիթթեղգինի ընտանիքին՝ մորը, կնոջը և աղջկան, որոնք փախել և ապաստան էին գտել Հեթումյանների արքունիքում, հանձնի մոնղոլներին. հակառակ դեպքում Բաշու նոյոնը սպառնում էր Հեթում Ա թագավորին, ասելով՝ «Քո ամեն սէրն որ հետ մեկ զրիր նա սուտ է»⁵⁴, և հայերը «վախեցին, որ թաթարին շլցուէր յերկիրն, տուին»⁵⁵:

Կիրակոս Բանձակեցին հաստատելով Սմրատ Սպարապետի վկայությունը, պատմում է, թե ինչպիսի մեծ դժվարությամբ Հեթում Ա թագավորը համա-

51 Տե՛ս Микаелян Г., История Килик. арм. гос-ва, էջ 332:

52 Էլ-տամղայն — երաշխիք երկրի անձեռնմխելիության մասին, համապատասխան գրություն Շ. Մանանդյանը Էլ-տամղա տերմինը դնում է տամղա-ի կողքին, որպես հոմանիշ բառ (տե՛ս Շ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, էջ 216): Այդ բառին հանգամանորեն անդրադառնում է Պատկանովը, «История монголов по армянским источникам». вып. II, перевод и объяснения К. П. Пяткова, СПб, 1874, էջ 135, примеч. 6:

53 Կիրակոս Գանձակեցի, էջ 285:

54 Սմրատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 122:

55 նույն տեղում:

ձայնվեց իր հյուրերին հանձնել մոնղոլներին: Պատմիչը բերում է Հեթումի խոսքերը՝ «Էս էր ինձ եթէ զորդի իմ՝ զԼևոն խնդրեալ էին յինէն, քան թէ սնոսա»⁵⁶:

Հեթումյանների այդ վերաբերմունքը ոմանք դատապարտում են. սուլթանի բնտանիքը մոնղոլներին հանձնելու համար Արույ Ֆարաշը մեղադրում է Կոստանզին Պալին⁵⁷: Այդ հարցին ավելի հանգամանորեն անդրադառնում է սուլթանական գիտնական ակադեմիկոս Գորդլևսկին. նա դատապարտում է Հեթում Ա թագավորին այն բանի համար, որ վերջինս կոպիտ կերպով խախտել էր արևելյան հյուրընկալության սովորույթը, իր հյուրերին հանձնելով Բաշու նոյոնին⁵⁸:

Որոշ արևելագետներ այլ գնահատական են տալիս Հեթումյանների այդ վերաբերմունքին: Այսպես, օրինակ, Քերովրե Պատկանյանը գրում է, որ Հեթում Ա թագավորը հանձնելով իր հյուրերին նրանց, զրանով իսկ մի կողմից ձեռք բերեց մոնղոլների վստահությունը, իսկ մյուս կողմից իր ղեկավարեց Իկոնիայի սուլթանությանը, դարձնելով նրան իր անհաշտ թշնամին⁵⁹: Քերովրե Պատկանյանին համամիտ է նաև ուրա ականավոր ակադեմիկոս Ուսպենսկին: Նա գրում է, որ Հայոց Հեթում Ա թագավորը իր զգույշ քաղաքականությամբ ոչ միայն փառքի ու հարստության մեջ թագավորեց ավելի քան քառասունհինգ տարի, այլ զրա հետ միասին, ձեռք բերեց մոնղոլների վստահությունը և իսկական բարեկամությունը, որով ապահովեց Կիլիկիայի հայոց թագավորության լրիվ անկախությունը⁶⁰:

Ակադեմիկոս Ուսպենսկին անկասկած ավելի ճիշտ է բնութագրել Կիլիկիայի թագավորության արտաքին քաղաքականությունը: Հեթումյանները, որոնք այնքան մեծ դժվարությամբ կարողացել էին մոնղոլների հետ լեզու գտնել և նրանց հետ բարեկամություն հաստատել, սուլթանի բնտանիքի պատճառով չէին կարող իրենց երկիրը վտանգի ենթարկել: Այստեղ խոսքը ոչ թե ինչ-որ «արևելյան սովորությունների» խախտման մասին էր, ինչպես կարծում է ակադեմիկոս Գորդլևսկին, այլ Կիլիկիայի հայոց թագավորության և ժողովրդի զոյության հարցն էր զրվում, այդ երկրի լինել-չլինելու հարցը: Եթե Հեթումը չկատարեր Բաշու նոյոնի պահանջը, դա նշանակում էր երկիրը ենթարկել անխուսափելի կործանման և իրավունք տալ մոնղոլներին հարձակվելու Կիլիկիայի հայոց թագավորության վրա: Հեթումյանների այդ հեռատես քաղաքականությունը իր արտահայտությունն է գտել ժամանակակից հեղինակների երկերում: Հիշատակարաններից մեկում, որը գրված է 1244 թվականին, Սի քաղաքում, ասված է. «Այս բազմավրդով ժամանակի ձեռն վերոյ նշանակեալ

⁵⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 285:

⁵⁷ Վիկտոր Լանգլուան իր «Extrait de la chronique de Sempad», Peter., 1862, էջ 29: Ի միջի այլոց նշում է միայն սուլթանի մորը և ազգան, իսկ կնոջը չի հիշատակում: Ոմրաար գրում է, որ սուլթանի մայրը «Էս էր գիր զոստրն և փախա ի Կիլիկա» (էջ 122), իսկ Կ. Գանձակեցին հիշատակում է և մորը, և կնոջը, և ազգան (աե՛ս Կիրակոս, էջ 285):

⁵⁸ Гордлевский, Гос-во сельдж., էջ 36—37:

⁵⁹ «История монголов по армянским источникам», вып. II, էջ 126:

⁶⁰ Успенский Ф. И., История Византийской империи, том III, М., 1918, էջ 605:

Բաղադրին Հեթմոյ խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեր մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յայլեաց մնացեալ լանդորր»⁶¹, նույն բանը հաստատում է Հեթում Բ-ն. նա գտնում է, որ հայ-մոնղոլական բանակցութիւններով «զազգտ և զզաւառաւ հրաշիւք փրկէր»⁶²:

Այս բոլոր փաստերը վկայում են, որ իրոք Հեթումյանների քաղաքական նոր կուրսը խոշոր շրջադարձ էր Կիլիկյան հայոց թագավորության արտաքին քաղաքականութեան բնազավառում:

Հայ-մոնղոլական դաշնագրութեան հիմքը դրված էր, անհրաժեշտ էր այն ամրապնդել: Այդ նպատակի համար հատուկ որոշում ընդունվեց ղեկավարութիւն ուղարկել մոնղոլների արքունիքը և խաների հետ շարունակել այն բանակցութիւնները, որ սկսված էին Կեսարիայում: Կիլիկյան հայոց թագավորութեան որոշմամբ կազմվեց հատուկ պատվիրակութիւն Սմրատ Սպարապետի գլխավորությամբ, որը Մոնղոլիա գնաց 1246 թվականին:

Ոմանք գտնում են, որ Սմրատ Սպարապետը Մոնղոլիա չի գնացել, այլ գնացել է Ոսկե Հորդայի խան Բաթուի մոտ: Այդ մասին բավականին հանգամանորեն խոսում է ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը իր «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» գրքում: Առարկելով ակադ. Գրեկովին և պրոֆ. Յակուբովսկուն, նա գրում է. «Աղբյուրների վկայութիւնների ուշադիր քննութիւնից դժվար չէ կոահել, որ նա (Սմրատը) իրապէս, ինչպէս մատնանշել է Մաղաբիա Արեղան (այսինքն՝ Գրիգոր Պատմիչը), գնացել էր Ոսկե Հորդա Սայինդան Բաթուի մոտ, որին մոնղոլները, ինչպէս հայտնի է, անվանում էին «Սային Ղան», այսինքն «լավ խան»»⁶³: Այնուհետև մեծանուն գիտնականը վկայակոչելով պարսկական պատմագիր Ջուլիջնի այն կարծիքը, որ Բաթուի մոտ եկել էին և ստացել նրանից արտոնագրեր Իկոնիայի, Ասորիքի և այլ երկրների սուլթանները, եզրակացնում է՝ որովհետև «Սմրատ Սպարապետը գնացել էր մեծ խանի մոտ՝ ուղեկցությամբ Իկոնիայի Ղիաթեղդին սուլթանի որդիներից մեկի», հետևապէս Սմրատը նույնպէս գնացել է Բաթու խանի մոտ: Փաստարկումներից մեկն էլ այն է, որ Սմրատը չէր կարող 1248—1250 թվականներին Դուլուք խանի մոտ գնացած լինել, քանի որ վերջինս մահացել էր հենց այդ՝ 1248 թվականին: «Ուստի և նա (Սմրատը),—շարունակում է Մանանդյանը,—ներկայացել էր Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանին, որն այդ ժամանակ, մինչև Մանգուի մեծ խան ընտրվելը (1251—1259) ժամանակավորապէս վարում է մեծ խանի պաշտոնը»⁶⁴:

Մեր կարծիքով ակադեմիկոս Հ. Մանանդյանի բերած այս փաստարկումները իրականութեան չեն համապատասխանում: Նախ Սմրատ Սպարապետը Մոնղոլիա է գնացել Գուլուք-խանի կենդանութեան ժամանակ, այսինքն 1246 թվականին. այդ մասին վկայում է Լևոն Գ թագավորի որդի Հեթում Բ-ն, որը գրում է. «Սմրատը Մոնղոլիա է գնացել Ողն (1246) թվականին»⁶⁵: Բացի այդ, Սմրատի՝ Կիպրոսի թագավոր Հենրի Լուկինյանին գրած նամակից երևում է,

⁶¹ «Յիշատակարանք Անուգրագ», էջ 961—962:

⁶² Մատենադարան, ձեռ. № 2075, էջ 561ր:

⁶³ Б. Греков и А. Якубовский, Золотая орда, Ленинград, 1937, էջ 103:

⁶⁴ Հ. Մանանդյան, Քննական տեսութիւն, հատ. Գ, էջ 220:

⁶⁵ Մատենադարան, ձեռ. № 663, էջ 249ր:

Բաղաւորին Հեթմոյ խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեր մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յայլեաց մնացեալ լանդորր»⁶¹, նույն բանը հաստատում է Հեթում Բ-ն. նա գտնում է, որ հայ-մոնղոլական բանակցութիւններով «զազգտ և զգաւառաւ հրաշիւք փրկէր»⁶²:

Այս բոլոր փաստերը վկայում են, որ իրոք Հեթումյանների քաղաքական նոր կուրսը խոշոր շրջադարձ էր Կիլիկյան հայոց թագավորութեան արտաքին քաղաքականութեան բնագավառում:

Հայ-մոնղոլական դաշնագրութեան հիմքը դրված էր, անհրաժեշտ էր այն ամրապնդել: Այդ նպատակի համար հատուկ որոշում ընդունվեց ղեկավարութիւն ուղարկել մոնղոլների արքունիքը և խաների հետ շարունակել այն բանակցութիւնները, որ սկսված էին Կեսարիայում: Կիլիկյան հայոց թագավորութեան որոշմամբ կազմվեց հատուկ պատվիրակութիւն Սմրատ Սպարապետի զխաւորութեամբ, որը Մոնղոլիա գնաց 1246 թվականին:

Ոմանք գտնում են, որ Սմրատ Սպարապետը Մոնղոլիա չի գնացել, այլ գնացել է Ոսկե Հորդայի խան Բաթուի մոտ: Այդ մասին բավականին հանգամանորեն խոսում է ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը իր «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» գրքում: Առարկելով ակադ. Գրեկովին և պրոֆ. Յակուբովսկուն, նա գրում է. «Ազդէութեան վկայութիւնների ուշադիր քննութիւնից դժվար չէ կոահել, որ նա (Սմրատը) իրապէս, ինչպէս մատնանշել է Մաղաբիա Արեղան (այսինքն՝ Գրիգոր Պատմիչը), գնացել էր Ոսկե Հորդա Սայինդան Բաթուի մոտ, որին մոնղոլները, ինչպէս հայտնի է, անվանում էին «Սային Ղան», այսինքն «լավ խան»⁶³: Այնուհետև մեծանուն գիտնականը վկայակոչելով պարսկական պատմագիր Զուլեյնի այն կարծիքը, որ Բաթուի մոտ եկել էին և ստացել նրանից արտոնագրեր Իկոնիայի, Ասորիքի և այլ երկրների սուլթանները, եզրակացնում է՝ որովհետև «Սմրատ Սպարապետը գնացել էր մեծ խանի մոտ՝ ուղեկցութեամբ Իկոնիայի Ղիաթեղդին սուլթանի որդիներից մեկի», հետևապէս Սմրատը նույնպէս գնացել է Բաթու խանի մոտ: Փաստարկումներից մեկն էլ այն է, որ Սմրատը չէր կարող 1248—1250 թվականներին Գույուք խանի մոտ գնացած լինել, քանի որ վերջինս մահացել էր հենց այդ՝ 1248 թվականին: «Ուստի և նա (Սմրատը),—շարունակում է Մանանդյանը,—ներկայացել էր Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանին, որն այդ ժամանակ, մինչև Մանգուի մեծ խան ընտրվելը (1251—1259) ժամանակավորապէս վարում է մեծ խանի պաշտոնը»⁶⁴:

Մեր կարծիքով ակադեմիկոս Հ. Մանանդյանի բերած այս փաստարկումները իրականութեան չեն համապատասխանում: Նախ Սմրատ Սպարապետը Մոնղոլիա է գնացել Գույուք-խանի կենդանութեան ժամանակ, այսինքն 1246 թվականին. այդ մասին վկայում է Լևոն Գ թագավորի որդի Հեթում Բ-ն, որը գրում է. «Սմրատը Մոնղոլիա է գնացել Ողն (1246) թվականին»⁶⁵: Բացի այդ, Սմրատի՝ Կիպրոսի թագավոր Հենրի Լուկինյանին գրած նամակից երևում է,

⁶¹ «Յիշատակարանք Անուգրագ», էջ 961—962:

⁶² Մատենադարան, ձեռ. № 2075, էջ 561ր:

⁶³ Б. Греков и А. Якубовский, Золотая орда, Ленинград, 1937, էջ 103:

⁶⁴ Հ. Մանանդյան, Քննական տեսութիւն, հատ. Գ, էջ 220:

⁶⁵ Մատենադարան, ձեռ. № 663, էջ 249ր:

Ղարաղորդումում այն ժամանակ, երբ Սմբատը այնտեղ էր: Այդ մասին վկայում է Պլանո Կարպինին⁷¹:

Ինչ վերաբերում է Հ. Մանանդյանի այն կարծիքին, որ «Սալին դան» դա միայն Բաթու խանին է վերաբերում, նույնպես չի համապատասխանում իրականությանը: Տիգլենհաուզենի բերած արաբական աղբյուրներից մի փաստը, ըստ որի Բաթու խանին անվանում են «Սալին դան», չի կարող հիմք ընդունվել: Կան ուրիշ հուշարձաններ, որոնք որոշակի ցույց են տալիս «Սալին դանին» ոչ թե որպես Բաթու խանի, այլ որպես առաջին խանի. շատ հավանական է նկատի են ունեցել Չինգիզ խանին կամ Դուլուք խանին: Այդ մասին մենք ունենք մի հետաքրքիր փաստաթուղթ, որը բերված է ոուս արևելագետ Բերյուզինի հրապարակած «Ханские ярлыки» գրքում⁷²: Այդ պատմական հուշարձանում «Սալին դան» ասելով հասկացվում է մոնղոլների առաջին խանը, այսինքն Չինգիզ խանը, բայց ոչ Բաթու խանը: Բացի վերոհիշյալ փաստաթուղթներից, մենք ունենք նաև ուրիշ աղբյուրներ, որոնք պարզ ու որոշակի ցույց են տալիս, որ Սմբատ Սպարապետը զնացել է ոչ թե Բաթու խանի, այլ Գուլուք խանի մոտ: Հեթում Բ-ն գրում է. 1246 թվականին «Թագաւորն Հեղում առաքեաց զեղրայրն իւր պարոն Սմպատն Գունդստապլն ի Կիուկ (Գուլուկ—Ա. Գ.) խանն»⁷³: Հեթում Բ-ի կարծիքը հաստատում է այնպիսի վստահելի պատմիչ, ինչպիսին է Կիրակոս Գանձակեցին: Նա գրում է. «Մեծահաւատ և բրիստոսասէր արքայն հայոց Հեթում (իմա՝ Հեթում Ա—Ա. Գ.), որ ի կողմանս Կիլիկեցոց, նստէր ի քաղաքն Սիս: Նա յառաջադոյն առաքեաց զեղրայր իւր զՍմբատ, որ զօրավարն էր նորին, առ Ղանն Գիուկ (իմա՝ Գուլուկ—Ա. Գ.) ընծայիւր և պատարագօր, և դարձաւ ի նմանէ պատուով և հրովարտակօր»⁷⁴: Ինչպես տեսնում ենք, այստեղ պարզ ասված է, որ Սմբատ Սպարապետը Հեթում Ա թագավորի կողմից ուղարկվեց Մոնղոլիա Դուլուք խանի մոտ: Եվ վերջապես մեզ հասել է Սմբատ Սպարապետի նամակներից մեկը, որ զրել է նա Մոնղոլիա գնալու ճանապարհին, Սամարղանդից, 1246 թվականին և հասցեագրված է Կիպրոսի թագավոր Հենրի Լուդինյանին⁷⁵: Այդ նամակի հին ֆրանսերեն ընդգրկող բարերախոտարար մեզ է հասել: Հարց է առաջ գալիս, եթե Սմբատը Բաթու խանի մոտ գնար, ի՞նչ գործ ուներ Սամարղանդում: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Սմբատը Սամարղանդով Մոնղոլիա էր գնացել: Վերահիշյալ բոլոր փաստերը պերճախոս կերպով վկայում են, որ իրոք Սմբատ Սպարապետը զնացել է ոչ թե Բաթու խանի, այլ Մոնղոլիա՝ Ղարաղորդում, Գուլուք խանի արքունիքը:

71 Рихард Хенинг, Неведомые земли, перевод с немецкого А. В. Лисовской, предисл. и редакция И. П. Магидовича, том III, М., 1962, էջ 41:

72 Березин И. Н. Ханские ярлыки, том II, Казань, 1851. Ահա այդ տեքստը. «Д' предков владеющего сим ярлыком Мухаммеда со времени давно пришедшего Саиу Хана, от одного к другому переходил ярлык...»: Այստեղ հասկացվում է Չինգիզ խանը, կամ առաջին խաններից մեկը, և ոչ Բաթու խանը:

73 Մատենադարան, ձեռ. N° 663, էջ 247ր:

74 Կիրակոս Գանձակեցի, էջ 364:

75 Տե՛ս «Ces autres lettres étoient du Connetable d'Arménie au Roi de Cypre» (V. Pierre Bergeron, Voyage en Asie, t. I, էջ 154): Այդ հետաքրքիր նամակի տեքստը ուսներեն թարգմանությունը մենք առաջին անգամ հրապարակել ենք մեր «Армянские источники о монголах» գրքում, էջ 64—66:

Այսպիսով, մեր բերած փաստերը համոզիչ կերպով վկայում են, որ հայ-մոնղոլական բանակցությունների նախնական շրջանը սկսում է 1243 թվականից, Չմանկատուկի ճակատամարտից անմիջապես հետո: Այդ բանակցությունները նպատակ ունեին, մի կողմից, դաշն կնքելով մոնղոլ նվաճողների հրամանատարության հետ՝ փրկել Երկիրը սպառնացող վտանգից, իսկ մյուս կողմից՝ պաշտպանել Կիլիկյան հայոց թագավորության ազատությունն ու անկախությունը դեպի իրեն թշնամարար տրամադրված իր հարևան սուլթանություններից:

Հայ-մոնղոլական դիվանագիտական բանակցությունների հաջող ավարտման հետևանքով Կիլիկյան հայոց թագավորությունը լիովին հասավ իր նպատակին: Նա իր արտաքին այդ քաղաքականությամբ փրկեց իր երկրի անկախությունը և ազատեց մոնղոլրդին մասսայական բնաջնջումից:

ПЕРВЫЙ ЭТАП АРМЯНО-МОНГОЛЬСКИХ ПЕРЕГОВОРОВ

Доктор истор. наук А. Г. ГАЛСТЯН

(Р е з ю м е)

Первое сражение между войсками монгольских завоевателей и иконийского сельджукского султаната произошло в 1243 г. возле города Ерзика, при деревне Чимаикатук. Одержав победу над войсками иконийского султана Гияс-ад-дина Кей Хосрова (Хавуса) II, монголы подошли к границам Киликийского армянского государства. Армянские правители с целью сохранения своего государства поспешили отправить своих послов к главнокомандующему монгольскими войсками Бачу-нойону и заключили с ним союз.

Переговоры между представителями Киликийского армянского государства и монгольского командования произошли в 1243 г. в Кесарии. Со стороны Киликийской Армении вели переговоры отец царя Гетума I, Константин Пайл, и главнокомандующий армянскими войсками Смбат Спарамет, а со стороны монголов — полководец Бачу-нойон. В результате было достигнуто соглашение о том, что Киликийское армянское государство будет снабжать монгольскую армию продовольствием и в случае необходимости выставит нужное количество войск для участия в походах. Со своей стороны главнокомандующий монгольскими войсками обещал сохранить суверенитет Киликийской Армении и оказать вооруженную помощь армянскому государству, если оно подвергнется нападению со стороны соседних государств. В этом союзе была заинтересована не только Киликийская Армения, окруженная мусульманскими государствами, но и монгольские ханы. Последние не считали возможным продолжать свои завоевания дальше на запад, ибо им противостояли султаны Алеппо и Египта. Кроме того, монголы слишком были оторваны от своего тыла. В лице Киликийского армянского государства монголы

нашли удобную базу для защиты своих границ от нападения малоазнатских мамелюков и подготовки почвы для новых нападений на соседние с Киликийской Арменией государства.

Благодаря армяно-монгольским переговорам правители Киликийской Армении спасли свою страну от неизбежного разорения. Одновременно объективно были сохранены условия для дальнейшего развития многовековой культуры армянского народа.